Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-691-30.10.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-100-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4. Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումները**

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը:

2. Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը շնորհվում է երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվներին՝ գիտության, կրթության, մշակույթի բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

Հոդված 3. Օրենքի 5.1.-ին հոդվածում.

1. 1-ին մասում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

2. 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վարչապետը, նախաձեռնություն դրսևորելիս կամ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կամ մարմինների կողմից առաջարկություն ստանալիս, խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել Վար-չապետին կից պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդատվական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով):»:

3. Ուժը կորցրած ճանաչել 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը:

Հոդված 4. Օրենքի 5. 2-րդ հոդվածում.

1. Վերնագրում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

2. 1-ին մասի 1-ին պարբերությունից հանել «և պատվավոր կոչումներ շնորհելու» բառերը:

3. 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերում և 2-րդ մասի 1-ին կետում «պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը փոխարինել «պարգևատրման» բառով:

4. 1-ին մասի 3-րդ կետտից հանել «կամ պատվավոր կոչումը» բառերը:

5. 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչապետի կողմից միջնորդությամբ դիմելիս՝ նաև Հանձնաժողովի եզրակացությունը՝ առկայության դեպքում»:

6. 2-րդ մասի 5-րդ կետից հանել «կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը:

7. Ուժը կորցրած ճանաչել 6-րդ մասը:

Հոդված 5. Օրենքի 5.3-րդ հոդվածի վերնագրում և 1-3-րդ մասերում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածում.

1. Վերնագրից հանել «և պատվավոր կոչումների արժանացած» բառերը:

2. Ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 28-41-րդ հոդվածները:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածում.

1. Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

2. 6-րդ և 8-րդ մասերում «պարգևներով» բառը փոխարինել «պարգևով» բառով, իսկ «կոչումների» բառը՝ «կոչման» բառով:

Հոդված 9. Օրենքի Հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված 2
«Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀԱԳՐԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի կրծքանշան

Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի կրծքանշանը պատրաստված է բրոնզափառ պղնձից, բաղկացած է 2 տարրից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի պատկերով ալիքաձև զոլակից և դրան կապօղակով ամրացված ալիքաձև շրջանից: Զոլակն ունի 25 մմ երկարություն և 10 մմ լայնություն, պատված է եռագույն սառը արծնով: Շրջանի տրամագիծը 36 մմ է: Կրծքանշանի միջին մասում՝ անփայլ մակերեսի վրա զետեղված է կոլեկտիվը խորհրդանշող ցայտաքանդակ՝ փայլեցված ողորկ մակերեսով: Վերին մասում Արարատ լեռան ոճավորված ուրվագիծն է, ստորին հատվածում պատկերված է դափնու ճյուղ՝ ներքևում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ» գրությամբ:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքով սահմանված կարգով շնորհված Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարչի, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժշկի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարչի, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի, Հայաստանի Հանրապետության տնտեսության վաստակավոր աշխատողի, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի պատվավոր կոչումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը, իսկ պատվավոր կոչումների արժանացած անձինք և կոլեկտիվները շարունակում են օգտվել սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված իրավունքներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից, այդ թվում՝ շարունակում են ստանալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1335-Ն որոշմամբ սահմանված ամենամսյա պատվովճարը:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-100-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 4. Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումները**

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը:»:

2. Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը շնորհվում է երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվներին՝ գիտության, կրթության, մշակույթի բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

Հոդված 3. Օրենքի 5.1.-ին հոդվածում.

4. 1-ին մասում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

5. 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վարչապետը, նախաձեռնություն դրսևորելիս կամ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կամ մարմինների կողմից առաջարկություն ստանալիս, խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել Վար-չապետին կից պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդատվական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով):»:

6. Ուժը կորցրած ճանաչել 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը:

Հոդված 4. Օրենքի 5. 2-րդ հոդվածում.

8. Վերնագրում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

9. 1-ին մասի 1-ին պարբերությունից հանել «և պատվավոր կոչումներ *շնորհելու*» բառերը:~~պարբերությունում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով~~

10. 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերում և 2-րդ մասի 1-ին կետում «պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու»~~1-ին կետում «պարգևատրելու»~~ բառը փոխարինել «պարգևատրման» բառով:

11. 1-ին մասի 3-րդ կետից հանել «կամ պատվավոր կոչումը» բառերը: ~~1-ին մասի 2-րդ կետում «պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը փոխարինել «պարգևատրման» բառով~~:

~~5.2-րդ մասի 1-ին կետում «պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը փոխարինել «պարգևատրման» բառով:~~

12. 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Վարչապետի կողմից միջնորդությամբ դիմելիս՝ նաև Հանձնաժողովի եզրակացությունը՝ առկայության դեպքում»:

13. 2-րդ մասի 5-րդ կետից հանել «կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը:

14. Ուժը կորցրած ճանաչել 6-րդ մասը:

Հոդված 5. Օրենքի 5.3-րդ հոդվածի վերնագրում և 1-3-րդ մասերում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածում.

3. Վերնագրից հանել «և պատվավոր կոչումների արժանացած» բառերը:

4. Ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 28-41-րդ հոդվածները:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածում.

3. Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

4. 6-րդ և 8-րդ մասերում «պարգևներով» բառը փոխարինել «պարգևով» բառով, իսկ «կոչումների» բառը՝ «կոչման» բառով:

Հոդված 9. Օրենքի Հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված 2

«Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀԱԳՐԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ՀՀ վաստակավոր կոլեկտիվի կրծքանշան

ՀՀ վաստակավոր կոլեկտիվի կրծքանշանը պատրաստված է բրոնզափառ պղնձից, բաղկացած է 2 տարրից՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի պատկերով ալիքաձև զոլակից և դրան կապօղակով ամրացված ալիքաձև շրջանից: Զոլակն ունի 25 մմ երկարություն և 10 մմ լայնություն, պատված է եռագույն սառը արծնով: Շրջանի տրամագիծը 36 մմ է: Կրծքանշանի միջին մասում՝ անփայլ մակերեսի վրա զետեղված է կոլեկտիվը խորհրդանշող ցայտաքանդակ՝ փայլեցված ողորկ մակերեսով: Վերին մասում Արարատ լեռան ոճավորված ուրվագիծն է, ստորին հատվածում պատկերված է դափնու ճյուղ՝ ներքևում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԿՈԼԵԿՏԻՎ» գրությամբ:

Հոդված 10. ~~Եզրափակիչ և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Օրենքով սահմանված կարգով շնորհված Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարչի, Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժշկի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարչի, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի, Հայաստանի Հանրապետության տնտեսության վաստակավոր աշխատողի, Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի պատվավոր կոչումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը, իսկ պատվավոր կոչումների արժանացած անձինք և կոլեկտիվները շարունակում են օգտվել սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված իրավունքներից և ՀՀ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններից, այդ թվում՝ շարունակում են ստանալ ՀՀ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի N 1335-Ն որոշմամբ սահմանված ամենամսյա պատվովճարը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-691 - 30.10.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Օրենքի նախագծի վերնագիր**	**Օրենքի** նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			մասի պահանջը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով շարադրվող՝ Օրենքի 4-րդ հոդվածն առաջարկում ենք լրացնել հետևյալ խմբագրությամբ՝ նոր 2-րդ մասով. «2. Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչումը շնորհվում է երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվներին՝ գիտության, կրթության, մշակույթի բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար:»՝ քննարկվող նորմով հստակեցնելու համար Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ պատվավոր կոչման շնորհման հիմքերը:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ՝ **1.** հոդվածի 2-րդ մասում *««պարբերությունում «կոչումներ» բառը փոխարինել «կոչում» բառով»»* բառերը փոխարինել *«պարբերությունից հանել «և պատվավոր կոչումներ*	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			շնորհելու» բառերը:» բառերով: **2.** հոդվածի 3-րդ մասում *«1-ին կետում «պարգևատրելու»»* բառերը փոխարինել *«1-ին, 2-րդ կետերում և 2-րդ մասի 1-ին կետում «պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու»»* բառերով: **3.** հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«1-ին մասի 3-րդ կետից հանել «կամ պատվավոր կոչումը» բառերը:»:* **4.** հոդվածի 5-րդ մասը հանել, **5.** 7-րդ մասից առաջ լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր մաս. «*2-րդ մասի 5-րդ կետից հանել «կամ պատվավոր կոչում շնորհելու» բառերը:»:* Վերոնշյալ փոփոխությունների հիման վրա վերանայել Նախագծի 4-րդ հոդվածի մասերի համարակալումը: Նախագծի 4-րդ հոդվածին բերաբերվող առաջարկները պայմանավորված են այն հանգամանքով, որ Նախագծի համատեքստում պահպանվելու		

			է միայն Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ պատվավոր կոչումը, որի շնորհման համար ներկայացվող միջնորդության բովանդակությանն ու կցվող փաստաթղթերին առաջադրվող պահանջները սահմանված են Օրենքի 5.2.-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում, ուստի 5.2.-րդ հոդվածի 1-3-րդ մասերում պատվավոր կոչման շնորհման միջնորդությանը ներկայացվող պահանջներ նախատեսելու անհրաժեշտություն չկա:		
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 10-րդ հոդված**	Նախագծի 10-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
5.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 9-րդ, 10-րդ հոդվածներ**	Նախագծի 9-րդ և 10-րդ հոդվածներում «ՀՀ» հապավումները փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:		
«Գիտական և Գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծերի վերնագրեր, 1-ին հոդված**	Օրենքների նախագծերի՝ 1. վերնագրերում նշված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: 2. 1-ին հոդվածներում՝ օրենքի հերթական համարից առաջ գրված «թիվ» բառը հանել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
«Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					

1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետից հանվող «պատվավոր կոչումների» բառերից բացի հանել նաեւ վերջիններիս նախորդող ստորակետը՝ դրույթի ճիշտ կետադրությունն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Օրենքի հերթական համարից հետո նշված «-Ն» տառը հանել, քանի որ «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում վերջինիս նորմատիվ բնույթի մասին նշումը բացակայում է:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ հոդված**	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխության արդյունքում նշված օրենքի 18.7-րդ հոդվածի 3-րդ պարբերության «բ» կետից հանվում է՝ ««Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ» կոչման շնորհման, «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր աշխատող», «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչ» կոչումների շնորհման» բառերը: Մինչդեռ գործող օրենքի 18.7-րդ հոդվածի 3-րդ պարբերության «բ» կետում բացակայում է «կոչման շնորհման» բառերը: Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք վերանայել կատարվող փոփոխությունը՝ վերը նշված դիտարկման հաշվառմամբ՝ դրույթի ինկորպորացումն ապահովելու նպատակով:		